

ՆԵՐՔԻՆ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Posted on May 25, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



Կարո Հակոբյան, Շվեդիա, 18 Մայիս 2021

Բռնատիրական երկրներում ժողովուրդը հնարավորություն չունի իր բողոքի ձայնը բարձրացնելու, քանի որ համատարած վախի մթնոլորտում պատասխանը բիրտ ճնշումն է, բանտերն են ու կախաղանները:

Հայաստանի պարագան 180 աստիճանով տարբեր է: Այստեղ տիրում է լիակատար ազատություն, ես կասեի հանձինս դատաիրավական քմահաճ և քառսային համակարգի՝ թալանիչների ու հինգերորդ շարասյան դերը կատարող բազմաթիվ ուժերի համար անպատժելիության եւ թողտվությունների եզակի միջավայր:

Պատերազմի ընթացքում, և պատերազմից հետո, վեց երկար ամիսներ ընդդիմություն կոչված 17 թիվը կրող «փրկիչները» կեղծ ազգային լոզունգների ներքո գործի դրին իրենց ողջ նյութական, լրատվական, քաղաքական և մարդկային խուլիգանական ռեսուրսները՝ բռնազավթելու իշխանությունը և քանդելու պետության հիմքերը: Սակայն նրանց չհաջողվեց: Պատճառը մեկն է. նոր իշխանությունների նկատմամբ արդարացի եւ անարդարացի ընդհանրական քննադատությունների և պատերազմի ահավոր հետեւանքների հակառակ՝ ժողովուրդը չզնայ այս հակապետական, հետադիմական, կոռումպացված և երկիրը թալանած հների ետևից, ուստի այդ հակազգային շարժումը ունեցավ անփառունակ վախճան:

Սրանք իհարկե չվերացան, սակայն ցավոք դասեր էլ չքաղեցին, այլ ընդհակառակը տարբեր դաշինքների անվան տակ իրենց սև գործը այժմ կատարում են բազմաթիվ այլ եղանակներով, որոնցից, որպես օրինակ կարելի է նշել Սյունիքի անվան տակ անթույլատրելիորեն հանքատերերի կողմից իրենց գրպանային *տեղական* կուսակցության և նման այլ կուսակցությունների ստեղծումը:

Այժմ, երբ թշնամին մտել է մեր տունը, մեր սահմաններից ներս, և սպառնում է ողջ Հայաստանին, հարկավոր է մի ժամ առաջ կատարած սխալներից դասեր քաղել և հանուն պետականության, հանուն ինքնիշխանության՝ արտաքին թշնամու դեմ դուրս գալ միասին, մեկ ձայնով, և ցույց տալ թշնամուն, բարեկամին և աշխարհին, որ հակառակ ներքին անհամաձայնությունների՝ ի զորու ենք մեկ միասնական ճակատով պաշտպանելու մեր երկիրը, մեր պետականությունը: Ահա այդ ժամանակ բոլորի՝ նույնիսկ թշնամու կողմից կվաստակենք և հարգանք, և արժանապատվություն: Եվ հաղթանակը մերը կլինի:

Հայաստանը լինելով միատարր երկիր, և ունենալով ազգային փոքրամասնությունների սքանչելի հայրենասեր համայնքներ, բնականաբար ներքին միասնություն ստեղծելու համար ունի հնարավոր բոլոր հատկանիշները:

Սա է մեր փրկության միակ ճանապարհը:

Պատմությունը ցույց է տալիս, որ կայսրությունները եւ ժողովուրդները աշխարհի

~~Ներսիսը վերացել են այն ժամանակ, երբ այդ երկրների բնակիչներն ու ժողովուրդը կորցնելով իրենց ներքին միասնությունը՝ երկիրը քանդել են ներսից, իսկ արտաքին թշնամին օգտվելով, ներխուժել և ոչնչացրել է նրանց:~~

Comments



armen baghdoyan – 2021-05-31 16:53:34

Յաւելուած.--«Փաշինեանն ապացուցեց, որ իսկապէս քաղաքականութիւնից ոչինչ չի հասկանում: Չի հասկանում ո՛չ իր ընդդիմախօսների եւ ո՛չ նոյնիսկ դաշնակիցների, ինչպիսին է Ռուսաստանը, ուղիղ, շիտակ ասուած խօսքերը: Աւելին, նա չի հասկանում անգամ, թէ ինչում է մեղադրում առաջին նախագահին, ասելով, թէ վերջինս ուզում է Ղարաբաղը յանձնել Ադրբեջանին: Մի բան, որ ինքն արդէն «փառաւորապէս» իրականացրել է՝ Ղա րաբաղը ոտքով-գլխով յանձնել է Ադրբեջանին:» Լ. Տեր-Պետրոսեան



Armen Baghdoyan – 2021-05-26 18:14:33

ՄԻԱՍՆՈՒԹԻՒՆ: Որքա՛ն գեղեցիկ, մանաւանդ յուսադրիչ բառ: Շուրջը անձի մը, որ երեք տարուան ընթացքին կատարած և ցուցաբերած է հետևեալ արարքներն ու յատկութիւնները. --Բացարձակ մենատիրութիւն, անողորմ բռնատիրութիւն, ազգային ատելավառ պառակտում ճերմակներ ընդդէմ սևերու, խոստումներու լիակատար դրժում, իւրայինները սեփականացնելու համար պատուազիններու անմիջական յաւելում և փողաշնորհումներ, նախկին նախագահիի մը երկամեայ կալանաւորում առանց մեղադրական հաւաստի հիմնաւորումի, ահաւոր տգիտութիւն և անչափելի ամբարտաւանութիւն, ավելի քան հազար տարուան ընթացքին ազգային ամենէն քանդարար և ամօթալի ռազմական պարտութիւն, սփիւռքահայութեան ողնաշարի, յոյսի և հաւատքի անմոռ կոտորում, հայ ժողովուրդի արժանապատուութեան և ազգային հպարտութեան գետնաքարշ լլկում, մտային անհաւասարակշռութեան բազում անհերքելի արտացոլացումներ.....Սիրոս կը փշռուի երբ կը դրսևորեմ վերոգրեալ բառերը:



Armenag Yeghiayan – 2021-05-25 11:16:36

Գրիչդ դալար, կեանքդ երկար, ազնիւ հայ: